ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2020 թվականի հունվարի 16-ի

ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 21 -Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 8-րդ մասով՝ Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը *որոշում է.*

1. Սահմանել.

1) դիտորդների հավատարմագրման կարգը, հավատարմագրման համար անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) դիտորդների վկայականների ձևերը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ս.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

2020 թվականի հունվարի 16
ք.Ստեփանակերտ

Հավելված N 1
Արցախի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2020 թվականի հունվարի 16-ի N 21-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ, ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են դիտորդների հավատարմագրման կարգը, հավատարմագրման համար անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկությունների ցանկի սահմանման, վկայականների տրամադրման հետ կապված հարաբերությունները:

2. Ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք ունեն՝

1) միջազգային կազմակերպությունները.

2) օտարերկրյա պետությունների ներկայացուցիչները.

3) Արցախի Հանրապետության և օտարերկրյա հասարակական այն կազմակերպությունները, որոնց կանոնադրական խնդիրները ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր, և որոնք չեն աջակցում Հանրապետության նախագահի թեկնածուներին, Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին), համայնքի ղեկավարի թեկնածուներին, համայնքի ավագանու անդամի թեկնածուներին:

3. Միջազգային կազմակերպությունները, օտարերկրյա պետությունների ներկայացուցիչները և օտարերկրյա հասարակական կազմակերպությունները դիտորդական առաքելություն կարող են իրականացնել հրավերի առկայության դեպքում: Միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա հասարակական կազմակերպությունների դիտորդական առաքելությունների կազմում որպես դիտորդ Արցախի Հանրապետության քաղաքացիներ ընդգրկվել չեն կարող:

4. Սույն կարգի 2-րդ կետում նշված դիտորդներն իրենց առաքելությունն իրականացնում են Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովում (այսուհետ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողով) հավատարմագրվելուց հետո:

5. Հավատարմագրվելու կամ հավատարմագրված դիտորդների ցանկում փոփոխություններ (լրացումներ) կատարելու համար դիմումները Կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացվում ընտրությունները նշանակելու օրվանից հետո, բայց քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ:

6. Հավատարմագրվելու դիմումը պետք է պարունակի դիմողի անվանումը, ծանուցման հասցեն, հեռախոսահամարը, նշում՝ ընտրության անվանման և օրվա մասին, կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը, դիմումի տրման ամսաթիվը, դիմողի ստորագրությունը:

Հավատարմագրման դիմումին կից ներկայացվում է.

1) հասարակական կազմակերպության կանոնադրության պատճենը,

2) հրավերի պատճենը՝ միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա հասարակական կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների ներկայացուցիչների դեպքում,

3) հավատարմագրման ներկայացվող դիտորդների ցուցակը (այսուհետ՝ նաև ցուցակ): Ցուցակը (ձևը կցվում է) ներկայացվում է թղթային և էլեկտրոնային տարբերակներով: Ցուցակի էլեկտրոնային տարբերակը ներբեռնվում է Կենտրոնական ընտրական

հանձնաժողովի համացանցային կայքից, լրացվում տարբերակում նշված՝ Մայքրոսոֆթ Էքզել (Microsoft Excel) եղանակով և ներկայացվում է էլեկտրոնային կրիչով:

Ցուցակի էլեկտրոնային տարբերակում տվյալներն ու տեղեկությունները լրացվում են ԳՀԵԱ Գրապալատ (GHEA Grapalat) տառատեսակով, չափը՝ 10: Ցուցակի «հասարակական կազմակերպության անվանումը» դաշտում լրացվում է հասարակական կազմակերպության անվանումը, «ընտրության անվանումը և քվեարկության օրը)» դաշտում լրացվում է ընտրության անվանումը և քվեարկության օրը, ամիսը և տարեթիվը, «ազգանուն, անուն, հայրանուն» սյունակում լրացվում է դիտորդի ազգանունը, անունը, հայրանունը, «հեռախոսահամար, կապի այլ միջոցներ» սյունակում լրացվում է դիտորդի հեռախոսահամարը, կապի այլ միջոցները:

7. Արցախի Հանրապետության ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված մերժման հիմքերի բացակայության դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հավատարմագրում է դիտորդներին և նրանց հանձնում է վկայականներ դիմումն ստանալուց հետո՝ 7 օրվա ընթացքում:

8. Դիտորդները համարվում են հավատարմագրված Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հավատարմագրվելու մասին գրությունը ստանալու պահից: Հավատարմագրված դիտորդական կազմակերպությունների և դիտորդների վերաբերյալ տեղեկատվությունը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում է հավատարմագրման օրվանից հետո երեք օրվա ընթացքում:

9. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը վարում է գրանցամատյան, որտեղ նշվում են դիտորդներին վկայականներ հանձնելու մասին տեղեկություններ:

10. Միջազգային դիտորդներին տրամադրվում են հայերեն և անգլերեն կամ հայերեն և ռուսերեն լեզուներով լրացված վկայականներ:

11. Տեղական դիտորդների դեպքում համապատասխան կազմակերպությանը տրվում է ներկայացված ցուցակում ընդգրկված դիտորդների թվին համապատասխան քանակի վկայականներ, որոնցում լրացվում է համապատասխան կազմակերպության անվանումը: Դիտորդի վկայականում դիտորդի ազգանունը, անունը, հայրանունը լրացվում է համապատասխան կազմակերպության կողմից և տրամադրվում է դիտորդին: Վկայականը կարող է կնքվել դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպության կնիքով:

12. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մերժում է դիտորդների հավատարմագրման մասին դիմումը Արցախի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված հիմքերի առկայության պայմաններում:

13. Վերաքվեարկության, ինչպես նաև Հանրապետության նախագահի ընտրության 2-րդ փուլի դեպքերում դիտորդների կրկին հավատարմագրում չի պահանջվում:

14. Հանրաքվեի և տեղական հանրաքվեի ժամանակ դիտորդների հավատարմագրումն իրականացվում է Արցախի Հանրապետության ընտրական օրենսգրքին և սույն կարգին համապատասխան՝ «Հանրաքվեի մասին» օրենքի և «Տեղական հանրաքվեի մասին» օրենքի կանոնակարգումների հաշվառմամբ:

Ձև

ԱՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

[հասարակական կազմակերպության անվանումը]

[քվեարկության օրը]

Հ/Հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Հեռախոսահամար, կապի այլ միջոցներ

Հասարակական կազմակերպության
ղեկավար (տեղակալ) _____

(ազգանուն, անուն) (ստորագրություն)

Հավելված N 2
Արցախի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2020 թվականի հունվարի 16-ի N 21-Ն որոշման

Ձև N 1

Արցախի Հանրապետություն
Կենտրոնական ընտրական հանձնաժողով

[նշվում է ընտրության անվանումը]

[նշվում է քվեարկության օրը]

ՏԵՂԱԿԱՆ ԴԻՏՈՂԴ

_____
ազգանուն, անուն, հայրանուն

_____
կազմակերպության անվանում

Կ.Տ

Վկայականն ուժի մեջ է անձը
հաստատող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում

Ձև N 2

Արցախի Հանրապետություն
Կենտրոնական ընտրական հանձնաժողով

ՀԱՆՐԱՔՎԵ
[նշվում է հանրաքվեի դրված նախագծի (հարցի) անվանումը]

[նշվում է քվեարկության օրը]

ՏԵՂԱԿԱՆ ԴԻՏՈՂԴ

_____
ազգանուն, անուն, հայրանուն

_____
կազմակերպության անվանում

Կ.Տ

Վկայականն ուժի մեջ է անձը
հաստատող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում

Հավ N 3

Արցախի Հանրապետություն **Կենտրոնական ընտրական հանձնաժողով** [նշվում է ընտրության անվանումը] [նշվում է քվեարկության օրը] **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՂ** **Վկայական N ____** _____ ազգանուն, անուն, հայրանուն _____ կազմակերպության անվանում Հանձնաժողովի նախագահ _____ *ստորագրություն* Կ.Տ. Տրված է «_____» _____ 20 թ. *Վկայականն ուժի մեջ է անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում*	**РЕСПУБЛИКА АРЦАХ** **ЦЕНТРАЛЬНАЯ ИЗБИРАТЕЛЬНАЯ КОМИССИЯ** [указывается название выборов] [указывается день проведения голосования] **МЕЖДУНАРОДНЫЙ НАБЛЮДАТЕЛЬ** **Удостоверение N ____** _____ Ф.И.О. _____ Наименование организации Председатель комиссии _____ *подпись* М.П. Дата выдачи «_____» _____ 20 г. *Удостоверение действительно по предъявлению документа, удостоверяющего личность*

Արցախի Հանրապետություն **Կենտրոնական ընտրական հանձնաժողով** [նշվում է ընտրության անվանումը] [նշվում է քվեարկության օրը] **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՂ** **Վկայական N ____** _____ ազգանուն, անուն, հայրանուն _____ կազմակերպության անվանում Հանձնաժողովի նախագահ _____ *ստորագրություն* Կ.Տ. Տրված է «_____» _____ 20 թ. *Վկայականն ուժի մեջ է անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում*	**REPUBLIC OF ARTSAKH** **CENTRAL ELECTORAL COMMISSION** [the name of the Election is indicated] [the voting day is indicated] **INTERNATIONAL OBSERVER** **Certificate N ____** _____ Name, surname _____ Organization Commission Chairperson_____ signature Seal Date of issue «_____» _____ 20 . *The certificate is valid on presenting identification document*

Աղ N 4

Արցախի Հանրապետություն **Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով** **ՀԱՆՐԱՔՎԵ** [նշվում է հանրաքվեի դրված նախագծի (հարցի) անվանումը] [նշվում է քվեարկության օրը] **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴ** **Վկայական N ____** _____ ազգանուն, անուն, հայրանուն _____ կազմակերպության անվանում Հանձնաժողովի նախագահ _____ *ստորագրություն* Կ.Տ. Տրված է «_____» _____ 20 թ. *Վկայականն ուժի մեջ է անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում*	**РЕСПУБЛИКА АРЦАХ** **ЦЕНТРАЛЬНАЯ КОМИССИЯ РЕФЕРЕНДУМА** **РЕФЕРЕНДУМ** [указывается название проекта (вопроса) проведения референдума] [указывается день проведения голосования] **МЕЖДУНАРОДНЫЙ НАБЛЮДАТЕЛЬ** **Удостоверение N ____** _____ Ф.И.О. _____ Наименование организации Председатель комиссии _____ *подпись* М.П. Дата выдачи «_____» _____ 20 г. *Удостоверение действительно по предъявлению документа, удостоверяющего личность*

Արցախի Հանրապետություն **Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով** **ՀԱՆՐԱՔՎԵ** [նշվում է հանրաքվեի դրված նախագծի (հարցի) անվանումը] [նշվում է քվեարկության օրը] **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴ** **Վկայական N ____** _____ ազգանուն, անուն, հայրանուն _____ կազմակերպության անվանում Հանձնաժողովի նախագահ _____ *ստորագրություն* Կ.Տ. Տրված է «_____» _____ 20 թ. *Վկայականն ուժի մեջ է անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում*	**REPUBLIC OF ARTSAKH** **CENTRAL COMMISSION ON REFERENDUM** **REFERENDUM** [the name of the Referendum draft (question) is indicated] [the voting day is indicated] **INTERNATIONAL OBSERVER** **Certificate N ____** _____ Name, surname _____ Organization Commission Chairperson_____ signature Seal Date of issue «_____» _____ 20 . *The certificate is valid on presenting identification document*